Ս. Ա. ՎԻՐԱԲՅԱՆ

ՄԵԼԻՈՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1926—1930 ԹԹ.)

Սովետական Հայաստանը ցարական կառավարությունից ժառանգեց անբարեկարգ և քայքայված ոռոգման սիստեմ։ Ցարական կարգերում ջրաբաշխում կատարելիս ոչ միայն հաշվի չէր առնվում յուրաքանչյուր գյուղի կամ գյուղաշրջանի աշխարհագրական դիրքը, հողի կազմությունը, զանազան կուլտուրաների աճեցման խնդիրը, այլև յուրաքանչյուր գյուղի կարիքի չափը։ Ջուրը միրարների ձեռքին առևտրի առարկա էր, որի հետևանքով առաջանում էին ոչ միայն անհատ կուլակներ, այլև կուլակ գյուղեր։

Տիրապետող դասակարգերը իրենց ձեռքում կենտրոնացնելով լավագույն հողերն ու ջուրը, դաժանորեն ճնշում ու կեղեքում էին աշխատավոր գյուղացիությանը։

Հայաստանի ագրարնակչության գլխին դամոկլյան սրի պես կախված էր ջրի հարցը։

Դաշնակների տիրապետության տարիներին ոռոգվող հողատարածությունները խիստ պակասեցին։ 1913 թ. 97 հազար հեկտարի փոխարեն 1920 թ. կազմեցին 60,4 հազար հեկտար։

Ոռոգման սիստեմի զարգացման և հին, ավանդաբար մնացած սովորությունները արմատախիլ անելու համար Սովետական Հայաստանի Հեղկոմը 1921 թ. հունվարի 31-ի հատուկ դեկրետով պետականացրեց ոռոգման ջուրը։ Դեկրետում ասված էր. «Հայաստանի խորհրդային հանրապետության սահմաններում գտնվող բոլոր ջրերը, այսինքն գետերը, լճերը, լճակները, ճահիճները, աղբյուրները և ջրանցքները, առուներն ու այլ նմանօրինակ կառուցվածքներն իրենց բոլոր արհեստական սարքերով դառնում են պետական սեփականություն՝ առանց որևէ հատուցման»[1]։

Դեկրետով ընդմիշտ վերջ տրվեց ջրաբաշխական սիստեմում եղած անհորմալ վիճակին և սահմանվեցին հողագործների շահերից բխող ջրօգտագործման նոր կանոններ։

Սովետական Հայաստանում ջրաշինարարական աշխատանքներն սկսվում են 1921 թ. գարնանից։ Ավերված ու քայքայված ջրանցքների վերականգնման համար պետությունը հատկացնում է 750 փութ ցորեն և 800 ռուբլի ոսկով։ 1922 թ. հատկացվեց 14300 ռուբլի ոսկով և մեծ քանակությամբ ալյուր։ Այդ ժամանակաշրջանում ոռոգվող հողատարածությունները հասան մինչպատերազմյանի 90%-ին։

1923 թ. պլանային կարգով սկսվեց ոռոգման ցանցի ընդլայնումը։ Հայաստանի աշխատավորները ղեկավարված հարազատ կուսակցության ու կառավարության հոգատարությունից և ոռոգման սիստեմի ընդարձակման մասին Վ. Ի. Լենինի ցուցումներից, խանդավառությամբ մասնակցում էին ջրաշինարարական աշխատանքներին։

1923 թ. Զանգիբասարի, Գառնիբասարի, Վեղիբասարի, Մարդարարատի և Ապարանի ջրային շրջաններում սկսվեց ջրանցքների ու առուների մաքրումը՝ 1600 կմ տարածությամբ։ Այդ աշխատանքներին մասնակցեց 160 հազար մարդ[2]։ Իսկ 1924 թ. նույն ջրային շրջաններում մաքրվել է 1400 կմ տարածություն, որին մասնակցել է 90 հազար մարդ։ 1923 թ. մարտի 14-ին Կոշ գյուղում հավաքվում են Էջմիածնի գավառի Սամաղարի և Աշտարակի շրջանների 11 գյուղերի աշխատավորներ և որոշում կառուցել Կոշի ջրանցքը, իրար միացնելով Անրերդի ձորից դուրս եկած 11 առուները[3]։

1924 թ. Ղամարլուի շրջանի աշխատավորները մաքրում են ընդհանուր առուների 70%-ը։ Այդ առուների ու ջրանցքների մաքրման աշխատանքներին մասնակցել է 15 հազար մարդ[4]։

---

1 Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, Էջմիածին, 1924, էջ 101։

2 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 174, ց. 1, գ. 45, թ. 191։

3 Տե՛ս նույն տեղում, գ. 6, թ. 86—88։

4 Տե՛ս նույն տեղում, ֆ. 174, ց. 1, գ. 37, թ. 4։

1925 թ. Լենինականի ջրային շրջանում մաքրվեց 148 կմ տարածություն, որին մասնակցեց 2130 մարդ։ Նույն թվականին Էջմիածնում մաքրվեցին ու վերականգնվեցին 65, Իրեանի ջրային շրջանում՝ 83 մեծ ու փոքր ջրանցքներ՝ 177 կմ ընդհանուր երկարությամբ։ Այդ աշխատանքներին մասնակցեց 75933 բանվոր[5]։ Միայն 1925 թ. ոռոգման սիստեմի վերականգնման համար պետության կողմից որպես վարկ տրամադրվեց 113446 ռուբլի և 11650 փութ հացահատիկ[6]։

1923 թ. սկսվում են ճահճների չորացման աշխատանքները, որով զբաղվում են ՀՍՍՀ Ժողկոմխորհի գերագույն տեխնիկական բաժինը, առողջապահության ժողկոմին կից ջերմախտի դեմ պայքարող հանձնաժողովը և Անդրջրտնտեսությունը։

Ոռոգելի հողատարածություններն ընդարձակելու նպատակով 1922 թ. սեպտեմբերի 1-ին ՀՍՍՀ Ժողկոմխորհը որոշում է ստեղծել հանրապետության ջրային տնտեսության վարչություն։ Նորաստեղծ ջրային տնտեսությունը մշակում է ժամանակավոր կանոններ՝ ջրօգտագործմանը մասնակցողների ժողովներ հրավիրելու և ջրային շրջանների համար պաշտոնատար անձինք ընտրելու կարգի վերաբերյալ։

1925 թ. հեղեղներից վտանգը կանխելու համար կազմակերպվում են 11 ջրային պոստեր՝ Արաքս, Ախուրյան, Վանաձոր, Քասախ և Գառնիչայ գետերի վրա։ ՀՍԽՀ ներքին գործերի ժողկոմիսարիատը 1925 թ. փետրվարի 10-ին հեղեղներից վտանգը կանխելու համար կազմակերպում է «Արտակարգ եռյակներ», որոնք պետք է կազմակերպեին հեղեղների դեմ պայքարը[7]։

1923—1924 թթ. հանրապետության շրջաններում և գավառներում տեղի են ունենում ջրաբաշխական համագումարներ։ 1923 թ. ապրիլի 29-ին Քանաքեռում կայանում է Կոտայքի շրջանի ջրաբաշխական համագումարը, որը որոշում է վերացնել ջրաբաշխման հին կանոններն ու սովորությունները և ջուրը բաշխել ըստ գյուղերի՝ բահերով[8]։

1924 թ. ապրիլի 25-ին Նոր Բայազետի գավառի ջրաբաշխական համագումարը, որին մասնակցում էին գավառի 34 գյուղերի պատգամավորներ, որոշում է գավգործկոմին կից ստեղծել ջրային հանձնաժողով, որը պետք է ունենար ջրաբաշխական բաժին՝ բաղկացած գավառի միրաբից, միրաբի գործավարից, երկու ջուվարից և երեք թղթատար-ձիավորից[9]։ 1923—1924 թթ. ջրային հանձնաժողովներ են ստեղծվում նաև Հայաստանի մյուս գավառներում։ Այս հանձնաժողովները լուծում էին ջրօգտագործողների վեճերը, կարգավորում ջրօգտագործումն ու ջրաբաշխումը, կազմակերպում առուների ու ջրանցքների մաքրում, պատնեշում վարարած գետերը, պայքարում հեղեղումների դեմ, կառուցում նոր ջրանցքներ։

1925 թ. մայիսի 27-ին հաստատված «ՀԽՍՀ ջրային շրջանների ժամանակավոր կանոնադրության» համաձայն Հայաստանը բաժանվում է ինը ջրային շրջանների՝ Լենինականի, Թալինի, Սարդարաբատի, Էջմիածին-Ապարանի, Զանգիբասարի, Ղրխբուլաղի, Գառնիբասարի, Վեդիբասարի և Գյոկչայի-Նոր Բայազետի[10]։ Կանոնադրության համաձայն ջրային շրջանի բոլոր ջրային գործերը վարում էր ինժեներ-հիդրոտեխնիկը, որն ուներ իր գրասենյակը գավառային կենտրոնում, տվյալ շրջանի ջրային գործերը վարելու պարտականությունները հանձնարարվում էր ջրօգտագործման բոլոր մասնակիցների կողմից ընտրված լիազորին՝ միրաբին (շրջանային ավագ, ջրապետ), ջուվարներին (ջրանցքների հսկիչ) և ջրերի ավագներին (ջրաժան)։

Համաձայն ջրային շրջանի կանոնադրության, լիազորը ընտրվում էր մեկ տարի ժամանակով և հաստատվում գավգործկոմի կողմից։ Միրաբը ընտրվում էր գյուղում, դարձյալ մեկ տարի ժամանակով և հաստատվում շրջգործկոմի կողմից։

Կուսակցության ու կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ և Հայաստանի աշխատավորության խանդավառ աշխատանքի հետևանքով 1922—1925 թթ. ընթացքում վերականգնվեցին 430 մեծ ու փոքր ջրանցքներ՝ 3220 կմ ընդհանուր երկարությամբ, և կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին Էջմիածնի, Էվջիլարի, Կարճևանի, Դավալուի, Արազգայանի, Արզաքանի, Փոքր Սարդարաբատի, Շիրակի ջրանցքները։ Էջմիածնի ջրանցքի շահագործման շնորհիվ Արարատյան դաշտավայրում ջրովի հողամասերն ավելացան 120 դեսյատինով, Էվջիլարի ջրանցքի շնորհիվ՝ 1600 հեկտարով։ Շիրակի ջրանցքը ոռոգեց 10800 հեկտար անջրդի հողատա-

---

5 Տե՛ս նույն տեղում, գ. 46, թ. 8։

6 Տե՛ս նույն տեղում։

7 Տե՛ս նույն տեղում, ֆ. 174, ց. 1, գ. 55, թ. 109։

8 Տե՛ս նույն տեղում, գ. 4, թ. 26։

* Մեկ բահ ջուրը հավասար է 20 լիտր/վայրկյանում։

9 Տե՛ս նույն տեղում, գ. 22, թ. 19։

10 Տե՛ս նույն տեղում, ֆ. 174, ց. 1, գ. 52, թ. 21—22։

բածություն, Սարդարապատի ջրանցքը՝ 8000 դեսյատին։ Ոռոգման սիստեմի ընդարձակման շնորհիվ 1925 թ., ժողովրդական տնտեսության վերականգնման վերջին տարում, Հանրապետությունում ոռոգելի հողատարածությունը անցել էր մինչպատերազմյան 97 հազար հեկտարից և 1922 թ. համեմատությամբ հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունները ավելացել էին 230%-ով, 91,2 հազար հեկտարից հասնում էին 255,7 հազար հեկտարի։

Հանրապետության ոռոգման սիստեմի զարգացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում մեծ նշանակություն ունեցավ գյուղացիական տնտեսությունների կոոպերացումը։ Վ. Ի. Լենինի կոոպերատիվ պլանի հիման վրա 1924 թ. օգոստոսի 30-ին Հանրապետությունում կազմակերպվեցին գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի պարզ ձևեր և առանձին վարկային ու մելիորատիվ ընկերություններ, որոնց նպատակն էր գյուղացիության կապերն ամրացնել սովետական իշխանության հետ և ամրապնդել բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքը, կազմակերպել գյուղատնտեսական արտադրությունը, ձեռք բերել գյուղգործիքներ, սերմացու։

1925 թ. հունվարին Հայաստանում գործում էին 104 կոոպերատիվ արտելներ ու ընկերություններ, իսկ 1926 թ.՝ 205, որոնց մեջ ընդգրկված էին 30075 գյուղացիական տնտեսություններ[11]։ 1928 թ. գյուղկոոպի պարզ ձևերում ընդգրկված էին 62 հազար տնտեսություն։

Հանրապետության ոռոգման սիստեմի զարգացման պատմության մեջ իրենց ուրույն տեղն ունեն մելիորատիվ ընկերությունները, որոնք շահագործում էին գործող ոռոգման սիստեմները։ Մելիորատիվ ընկերությունների կազմակերպման հարցում Ռուսաստանում աշխատանքներն ընկրկվել էին դեռևս 1922 թ.։ Այնտեղ կազմակերպվել էին մոտ 5000 մելիորատիվ ընկերություններ՝ իրենց մեջ ընդգրկելով 600 հազար գյուղացիական տնտեսություններ[12]։

1926 թվականի փետրվարի 15-ից 22-ը տեղի է ունեցել համառուսական մելիորատիվ առաջին խորհրդակցությունը, որը որոշել էր.

1. Ուժեղացնել գյուղական ազգաբնակչության հետագա նախաձեռնությունը։

2. Ազգաբնակչության միջոցները և ուժերը ավելի լայն մոբիլիզացնել ինքնագործունեության հիմունքներով։

3. Ամբողջ մելիորատիվ շարժումը մտցնել կոոպերատիվ հունի մեջ[13]։

Սովետական Ռուսաստանի և եղբայրական մյուս հանրապետությունների օրինակով ՀՍՍՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը 1926 թ. հունվարի 15-ին հաստատում է «ՀԽՍՀ մելիորատիվ ընկերությունների նորմալ կանոնադրությունը», որի առաջին պարագրաֆում շարադրված էր ընկերությունների խնդիրները։ Կանոնադրությունում նշված էր ընկերությունների անդամների իրավունքներն ու պարտականությունները։

Սովետական Հայաստանում մելիորատիվ ընկերությունները ստեղծվել են 1926 թ.։ Առաջին մելիորատիվ ընկերությունը կազմակերպվել է Երևանի գավառի Ալիմամեդ գյուղում 1926 թ. մայիսին[14]։

Հայաստանում կազմակերպված մելիորատիվ ընկերությունների նպատակն էր գյուղացիական լայն զանգվածներին ընդգրկել ջրատնտեսական կառուցվածքների ղեկավարման գործում, թեթևացնել պետության բեռը ջրային ցանցի շահագործման հետ կապված ծախսերի նկատմամբ և միաժամանակ ներգրավել գյուղացիության մասնավոր միջոցները ջրաշինարարության մեջ։

Մինչև 1927 թ. մարտի 25-ը Սովետական Հայաստանում գործում էին 16 մելիորատիվ ընկերություններ, որոնց մեջ ընդգծված էին 3377 տնտեսություն՝ 10926 դեսյատին հողով։ 1928 թ. կար 18 ընկերություն, որտեղ ընդգրկված էին մելիորացիայի դծով կոոպերացման ենթարկված 11560 տնտեսություն, որը կազմում էր գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսությունների 72,3%-ը։ Յուրաքանչյուր ընկերություն միջին հաշվով ընդգրկում էր 770 տնտեսություն։

Մելիորատիվ ընկերությունները 1926—1927 թթ. ընթացքում վարկային ընկերություններից ստացել են 357324 ռ.։ Յուրաքանչյուր ընկերություն միջին հաշվով ստացել է 23854 ռ. վարկ[15]։

---

11 Տե՛ս «ՀՍԽՀ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թվականներին», Երևան, 1927, էջ 19։

12 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 174, ց. 1, գ. 70, թ. 8։

13 Տե՛ս նույն տեղում, գ. 70, թ. 8։

14 Տե՛ս նույն տեղում, գ. 71, թ. 3։

15 Տե՛ս նույն տեղում, ֆ. 174, ց. 1, գ. 71, թ. 3։

Մելիորատիվ ընկերությունները Սովետական Հայաստանում 1926—1928 թթ.[16]

Ընկերությունը	Ընկերության անունը	Կազմակերպման թվականը	Ընդգրկված գյուղերի քանակը	Տնտեսությունների քանակը	Ուղղված հողատարածությունը (դեսյատին)	Վարկանիշը (ռուբլի 1 դեսյատին հաշվով)*
Ալիմամեդի	Աղիզբեկովի անվան	1926	3	422	320	13650
Արմաշի	Կասյանի անվան	1927	4	210	134	700
Դավալուի	«Ազատարար»	1927	1	429	1485	6200
Երևանի միացյալ		1928	5 ընկ.	1073	2715	2000
Լենինականի		1927	11	3376	6644	14260
Կարճևանի		1927	7	133	850	9000
Կոտայքի	«Երխբուլաղ»	1928	14	2405	3544	1000
Կոթիգյուղի		1927	1	104	300	150
Անդերդի		1927	11	1100	3000	1300
Ջիթհանքովի	Սպանդարյանի անվան	1926	10	1513	6898	700
Մեղրու	Մյասնիկյանի անվան	1927	1	180	200	6900
Նորագավիթի	«Աշխատանք»	1926	9	1635	1505	1000
Նոր Բայազետի		1926	1	1104	3600	1400
Շվանիձորի	Շահումյանի անվան	1927	1	150	250	1000
Ջողաղի	«Հույս»	1927	1	60	280	400
Վաղարշապատի		1926	2	1200	1646	2200
Դավշան Ղշլաղի		1927	1	212	388	150
			88	15306	33759	62010

Լենինականի գավառի առաջին գավառակի մելիորատիվ ընկերությունն ընդգրկում էր Դյուզքենդ (Ախուրյան), Դիրաքլար (Կառնուտ), Հաջինազար (Կամո), Թոփալի (Հացիկ), Ղարաքիլիսա (Ազատան), Ալեքսանդրովկա (Ղարիբջանյան), Օրթաքիլիսա (Մայիսյան), Ղոնախղռան (Շիրակ), Թափադոլլակ (Արևիկ), Վերին Ղանլիջա (Վահրամաբերդ), Ներքին Ղանլիջա (Մարմաշեն) գյուղերը։

Այս տասնմեկ գյուղերն ունեին 6644 դեսյատին ջրովի հողեր, ընկերության անդամներ էին վերոհիշյալ գյուղերի 3376 գյուղացիական տնտեսություններ[17]։

Տնտեսությունների փայավճարի չափը, համաձայն լիազորական ժողովի, սահմանված էր յուրաքանչյուր մեկ դեսյատին հողամասի համար 3 ռուբլի. իսկ յուրաքանչյուր տնտեսությունից մուտքի վճար՝ 50 կոպեկ[18]։

Լենինականի մելիորատիվ ընկերությունը տեղի վարկային ընկերությունից որպես վարկ ստացել էր 89 հազար ռուբլի։ Ընկերությունն ուներ վարչություն, որի աշխատանքները ղեկավարում էր նախագահը։ Վարչությունն ուներ հաշվապահ, դրամ հավաքող, գանձապահ։ Ընկերությունն ուներ վերստուգիչ հանձնաժողով, որը հաճախակի ստուգում էր ընկերության գործունեությունը։

Վարչությունը լույս էր ընծայում պատի թերթ, որտեղ լուսաբանվում էր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում մելիորացիայի նշանակությունը։ Լենինականի մելիորատիվ ընկերության անդամների մասնակցությունը ջրաշինարարական աշխատանքներին արտահայտվում էր նրանում, որ նրանք 1927 թ. Շիրակի ջրանցքին մատակարարել են 8000, իսկ 1928 թ. 30 հազար բանվոր[19]։

Սկզբնական շրջանում մելիորատիվ ընկերություններն անդամագրում էին բոլոր շահագրգռված ջրօգտագործողներին՝ առանց դասակարգային խտրականության։ Դա արվում էր հետևյալ

16 Տե՛ս նույն տեղում, գ. 83, 84, 85, 90, 99։

* Տվյալները՝ 1961 թ. դրամով։

17 Տե՛ս նույն տեղում, ֆ. 174, ց. 1, գ. 71, թ. 3։

18 Տե՛ս նույն տեղում։

19 Տե՛ս նույն տեղում, գ. 83, թ. 31։

պատճառով. որքան շատ էր ընկերության անդամ հանդիսացող տնտեսությունների թիվը, այնքան տնտեսապես ուժեղ էր ընկերությունը։

Այսպես, օրինակ, Նոր Բայազետի մելիորատիվ ընկերությունն ընդգրկում էր 1104 տնտեսություն, որից չքավորներ էին 274, միջակներ՝ 670, ունևորներ՝ 140, կուլակներ՝ 10 տնտեսություն[20]։

Սովետական Հայաստանի գյուղական աշխատավորությունը ուրախությամբ էր մտնում մելիորատիվ ընկերությունների մեջ։ Ընկերություններ հիմնելու նպատակով կայացած ժողովներն անցնում էին չքավոր գյուղացիության ակտիվ մասնակցության պայմաններում։

Հայ գյուղացին խանդավառությամբ էր մասնակցում ջրաշինարարական ամեն մի աշխատանքին և ժամանակին մուծում ջրային տուրքը՝ ջրելավարձը։

Մինչև 1929 թ. Հայաստանում գործող մելիորատիվ ընկերությունները հավաքել էին 120340 ռուբլի ջրային տուրք[21]։ Սովետական կառավարության և կոմունիստական կուսակցության հոգատարության շնորհիվ չքավոր գյուղացիությունն ու միջակ գյուղացիության զգալի մասը 1926 թ. ազատվեցին գյուղատնտեսական հարկից։ Մելիորատիվ ընկերություններում ընդգրկված չքավոր տնտեսություններն ազատվեցին ջրային տուրքից։ 1929 թ. հունվարի 3-ին Վաղարշապատի մելիորատիվ ընկերությունը որոշում է զիջել չքավորների ջրային հարկից գոյացած 1926, 1927 և 1928 թվականների պարտքը[22]։

Ջրային հարկից զարտուղի ճանապարհով երբեմն ազատվում էին նաև կուլակները։ Բանն այն էր, որ կուլակները ցանում էին չքավորների հողերը՝ կիսքար։ Ջրելավարձը մնում էր հողատիրոջ վրա։ Չքավոր հողատիրոջ հարկը զիջվում էր, իսկ ընկերությունը տնտեսապես տուժում։

1926—1929 թթ. ընթացքում մելիորատիվ ընկերությունները, չքավորության ջրելավարձը զիջելու պատճառով, վարկային ընկերություններին պարտք էին մնացել 90 հազար ռուբլի[23]։

Երբեմն ընկերություններում սողոսկում էին այնպիսի տարրեր, որոնք առանձին հարցերում պաշտպանում էին կուլակների ու ձայնազուրկների շահերը։ Վաղարշապատի մելիորատիվ ընկերության ղեկավարությունն ընկել էր կուլակային տարրերի ձեռքը, որոնք տուժեցրել էին ընկերության աշխատանքները, ճիշտ չէին տարել դասակարգային գիծը։ Ամռան ամիսներին ջուրը տրամադրվել էր կուլակներին և ունևորներին, որի հետևանքով չորացել էին ընկերության անդամ հանդիսացող Ալիբեգլու գյուղի չքավոր և միջակ տնտեսությունների այգիներն ու բանջարանոցները։

Ընկերության անդամները լիազորական ժողովում սկզբունքորեն քննադատում են ղեկավարության անթույլատրելի սխալները, աշխատանքները գնահատում անբավարար և փոխում ղեկավարությանը[24]։

1929 թ. օգոստոսի 2-ին ԽՍՀՄ Կենտգործկոմը որոշում է ընդունում ջրային տնտեսությունների և բամբակացան շրջանների աշխատանքների կարգավորման միջոցառումների մասին։

Որոշման մեջ ասված է.

Հանձնարարել Միջին Ասիայի և Անդրկովկասյան սովետական հանրապետությունների մելիորատիվ ընկերությունների կենտրոններին.

ա) անցկացնել մելիորատիվ ընկերությունների սոցիալական դրության հաշվառում՝ մաքրելով ընկերությունների վարչությունները սոցիալական այլ, կողմնակի տարրերից.

բ) անցկացնել գոյություն ունեցող մելիորատիվ ընկերությունների վերագրանցում[25]։

Այս որոշումը աշխուժություն մտցրեց մելիորատիվ ընկերությունների աշխատանքում։ 1928 թ. հուլիսի 1-ին Երևանի հինգ մելիորատիվ ընկերությունները (Մյասնիկյանի անվան, Շահումյանի անվան, Նարիմանովի անվան, Նորք-Գետառչայի և Նորագյուղի) միավորվում են մեկ միացյալ ընկերության մեջ և վտարում ձայնազուրկներին[26]։ Ձայնազուրկներին վտարում են նաև մյուս ընկերությունները։

Անգնահատելի աշխատանք կատարեցին Սովետական Հայաստանում գործող մելիորատիվ ընկերությունները։ Նոր Բայազետի մելիորատիվ ընկերությունը ջրաշինարարական մեծ աշխատանք կատարեց։ Գյուղբանկից ստանալով 14 հազար ռուբլու վարկ, քաղաքում պատրաստեց մի քանի ջրհորներ՝ խմելու և ոռոգելու նպատակով։

---

20 Տե՛ս նույն տեղում, ֆ. 174, ց. 1, գ. 92, թ. 6։

21 Տե՛ս նույն տեղում, գ. 99, թ. 1։

22 Տե՛ս նույն տեղում, ֆ. 174, ց. 1, գ. 77, թ. 7։

23 Տե՛ս նույն տեղում, գ. 95, թ. 13։

24 Տե՛ս նույն տեղում, գ. 77, թ. 17։

25 Տե՛ս նույն տեղում. ֆ. 174, ց. 1, գ. 95, թ. 15—19։

26 Տե՛ս նույն տեղում, գ. 79, թ. 66։

Լենինականի 4-րդ գավառամասի Զիթհանքովի ընկերությունը կարճ ժամանակամիջոցում կառուցեց Բուղդաշեն-Աղյամանի ջրանցքը և խմելու ջրով ապահովեց շրջանի 20 գյուղեր։ Ալիմահմեդի ընկերությունը կառուցեց Խոր Վիրապի ջրանցքը և ջրհան կայանը։ Ջրաշինարարական մեծ աշխատանքներ կատարեցին Մեղրու շրջանում գործող երեք մելիորատիվ ընկերությունները։ Կարճևանի ընկերությունն ընդարձակեց Կարճևանի ջրանցքի ոռոգման սիստեմը։ Մեղրու Ալ. Մյասնիկյանի անվան ընկերությունը գյուղում ոռոգելի դարձրեց հարյուրավոր հեկտար հողատարածություն, որտեղ հետագայում մշակվեցին խաղողի ու պտղատու այգիներ։ Շվանիձորի Ստ. Շահումյանի անվան մելիորատիվ ընկերությունը պատրաստեց մի քանի ջրհորներ։ Դիլիջանի գավառի Ջողազի «Հույս» և Կոթիգյուղի ընկերությունները իրենց գյուղերն ապահովեցին ոռոգման ջրով։ Ջողազցիները կառուցեցին վեց կիլոմետր երկարությամբ ջրանցք։ Լենինականի գավառի 6-րդ գավառամասի Տավշան Ղշլաղ գյուղի մելիորատիվ ընկերությունը Հայգյուղ բանկի մելֆոնգից ստանալով 1500 ռուբլու վարկ, կարճ ժամանակամիջոցում կառուցում է գյուղի ջրանցքը, որն ապահովում էր գյուղացիներին և՛ խմելու և՛ ոռոգման ջրով[27]։

Նորագավիթի «Աշխատանք» ընկերությունը, որը միավորում էր Երևանի գավառի 9 գյուղի տնտեսությունները, կանոնավորեց ջրամատակարարումը և վերացրեց ջրօգտագործման ու ջրաբաշխման հին ձևերը։ Երևանի հինգ մելիորատիվ ընկերությունները վերակառուցեցին Մամոի, Աբու հայաթի և Հին Դալմայի ջրանցքները։ 1928 թ. հուլիսի 1-ին այդ ընկերությունները միավորվում են մեկ մելիորատիվ ընկերության մեջ[28]։

Ս. Կասյանի անվան ընկերությունը ընդգրկում էր Արմաշ, Արազդայան, Սուրենավան և Սմո գյուղերը։ Ընկերությունը պետությունից ստանալով 7000 ռ. վարկ, զգալի աշխատանք կատարեց ճահիճների չորացման ուղղությամբ և անցկացրեց նոր առուներ ու ջրանցքներ Արազդայանի տափաստանում։

Սկզբնական շրջանում ջրելավարձը գանձում էին մելիորատիվ ընկերությունները։ 1929 թ. սկսած ջրելավարձի գանձումը անցնում է Հայջրտնտեսության իրավասության տակ։ Մելիորատիվ ընկերությունները այլևս չէին կարող մարել վարկային ընկերությունների պարտքերը։ Բացի դրանից, ընկերության եկամուտները չէին ծածկում նրանց առօրյա ծախսերը։ Վաղարշապատի մելիորատիվ ընկերությունը ծախսել է 32 հազար ռուբլի, մինչդեռ ջրային տուրք է հավաքել 5600 ռուբլի[29]։ Այս դրությունը շտկելու նպատակով ՍՍՀՄ Բանգյուղտեսչությունն առաջարկում է մելիորատիվ ընկերություններն անջատել ջրային տնտեսություններից և միացնել գյուղկոոպին։ 1928 թ. փետրվարի 29-ին ՀՍՍՀ Կոոպերատիվ խորհրդի նախագահությունը որոշում է զարգացնել մելիորատիվ ընկերությունները և հնարավորության դեպքում նրանց միավորել Հայգյուղկոոպի սիստեմում[30]։

Որոշման մեջ ասված է.

«Ի նկատի ունենալով, որ մելիորատիվ ընկերությունները ըստ իրենց էության կոոպերատիվ կազմակերպություններ են, հետագայում գտնել անհրաժեշտ նրանց ձևակերպումը գյուղկոոպի որևէ ճյուղում»[31]։

Հայաստանի ջրային տնտեսությունը աշխատավոր լայն զանգվածներին իռիգացիոն սիստեմների կառուցման աշխատանքներին մասնակից դարձնելու անհրաժեշտությունից ելնելով և նպատակ ունենալով բարելավել ոռոգման գործը, հանրապետության մելիորատիվ ընկերություններին հանձնեց Սովետական Հայաստանի սահմաններում գտնվող ջրային ամբողջական սիստեմները և նրանց առանձին մասերը։ 1929 թ. հունվարի 7-ից մելիորատիվ ընկերությունների կազմակերպչական ղեկավարությունը անցնում է Հայգյուղկոոպի իրավասության տակ, իսկ Հայջրտնտեսության իրավասության տակ է մնում միայն մելիորատիվ ընկերությունների շահագործման և տեխնիկական ղեկավարությունը[32]։

Մելիորատիվ ընկերությունների գործունեությունը ղեկավարելու նպատակով, ինչպես նաև նրանց աշխատանքները մելիորացիայի ասպարեզում կարգավորելու համար 1929 թ. օգոստոսի 9-ին ՀՍՍՀ Ժողկոմխորհը հաստատում է «Ջրային կոոպերացիայի կանոնադրությունը», որի մեջ պարզորեն շարադրված էր ջրային կոոպերացիայի խնդիրները։ Կանոնադրությունում ասված էր.

---

27 Տե՛ս նույն տեղում, ֆ. 174, ց. 1, գ. 64, թ. 47։

28 Տե՛ս նույն տեղում, գ. 79, թ. 66։

29 Տե՛ս նույն տեղում, ֆ. 174, ց. 1, գ 99, թ. 10։

30 Տե՛ս նույն տեղում, գ. 85, թ. 103։

31 Նույն տեղում։

32 Տե՛ս նույն տեղում, ֆ. 174, ց 1, գ. 20, թ. 6.

որ կոոպերացիայի նպատակն է հանրապետությունում զարգացնել ոռոգման սիստեմը, կազմակերպել ճիշտ ջրաբաշխում և պահպանել եղած ջրաշինարարական կառուցվածքները։

Ջրային կոոպերացիան ստորաբաժանվում է ջրային կոլեկտիվի և մելիորատիվ ընկերության։ Ջրային կոլեկտիվը մի կազմակերպություն էր, որը համախմբված լինելով գոյություն ունեցող որևէ ջրաշինարարական կառուցվածքի շուրջը, շահագործում էր գոյություն ունեցող ոռոգման սիստեմը։

Անդրժողկոմխորհը 1927 թ. օգոստոսի 18-ի «Ջրային կոլեկտիվների մասին» իր որոշման նախագծում տալիս է այդ կոլեկտիվներին ինքնուրույնություն՝ միաժամանակ պահպանելով ջրաբաշխման համար գոյություն ունեցող բոլոր որոշումներն ու օրենքները։ Իսկ «Ջրային տուրքի մասին» որոշման նախագծով Անդրժողկոմխորհը ազատում է այդ տուրքից ջրօգտագործողներին, որոնք համախմբված են ջրային կոլեկտիվում և կատարում են այն բոլոր աշխատանքները, որի համար նախատեսված է ջրային տուրքը։

1928 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ Սովետական Հայաստանում կար 5 ջրային կոլեկտիվ՝ Ալիմահմեդի, Վաղարշապատի, Տավշան Ղշլաղի, Արազդայանի և Երևանի միացյալ, որոնք օգտագործում էին վերանորոգված ու կառուցված ջրանցքներն ու ջրհան կայանները։

Մելիորատիվ ընկերությունը կազմվում էր շահագրգռվող ջրօգտագործողների կողմից։ Պետությունը երկարատև վարկի կարգով նրան բաց էր թողնում պահանջվելիք գումարի մոտ 75%-ը, իսկ մնացած գումարը տալիս էր ինքը՝ ընկերությունը իր անդամների կամ աշխատանքով, կամ դրամով, Այդ աշխատանքն ավարտելուց հետո, երբ արդեն ջրաշինարարական կառուցվածքը պատրաստ էր, մելիորատիվ ընկերությունը վերածվում էր ջրային կոլեկտիվի։ Սակայն և՛ ջրային կոլեկտիվի և՛ մելիորատիվ ընկերության հիմնական աշխատանքի առանցքը մնում էր նույնը, նրանց նպատակները միևնույնն էին։

ՀՍՍՀ Ժողկոմխորհը դեռևս 1926 թ. հունվարի 15-ին «Մելիորատիվ ընկերությունների մասին» իր որոշման մեջ նշում է, որ այդ ընկերություններն իրենց գործունեությունը միավորելու, ինչպես նաև թե՛ հայթայթման, թե՛ տեխնիկական ու արտադրական հարցերն ավելի լավ լուծելու նպատակով իրավունք ունեն մտնելու գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի համապատասխան կազմակերպության մեջ։

«Ջրային կոոպերացիայի կանոնադրության» համաձայն, մելիոր-կոոպերացիայի գործունեությունը ղեկավարելու նպատակով 1929 թ. նոյեմբերի 1-ից Հայգյուղկոոպին կից կազմակերպվում է ՀՍՍՀ մելիորատիվ ընկերությունների միությունը («Մելիորմիությունը»)[33]։ Մելիորմիության անդրանիկ նախագահ հաստատվեց Անանիա Բերբերյանը։

Մելիորմիությունն իր սիստեմի մեջ էր ընդգրկում Սովետական Հայաստանի բոլոր մելիորատիվ ընկերությունները։ Նրա ֆունկցիաների մեջ էր մտնում գյուղատնտեսության հողերի բարելավումը, ճահիճների չորացումը, ոռոգման, առուների ամրացումն, ջրաբաշխման և այլ ջրաշինարարական աշխատանքներ։ Հայգյուղկոոպին միանալը վճռական նշանակություն ունեցավ մելիորատիվ ընկերությունների համար։ Մելիորատիվ ու գյուղատնտեսական մյուս ընկերությունները Հայգյուղկոոպի օգնությամբ ձեռք բերեցին գյուղատնտեսական գործիքներ ու մեքենաներ։ Այսպես, օրինակ՝ 1927—1928 թթ. Հայգյուղկոոպը կոոպերատիվ ընկերությունների միջոցով գյուղացիական տնտեսություններին մատակարարել է մոտ 200 տրակտոր, 27 կալսիչ մեքենա, 4726 գութան, 105 զիգզագ փոցխ, 181 խոտհնձիչ մեքենա, 50 շարքացան, 100 սերմացանիչ մեքենա, 365 սերգատ մեքենա, 3939 քամհար մեքենա և այլն[34]։ Մելիորատիվ ընկերությունները Հայգյուղկոոպի սիստեմում զգալի աշխատանք կատարեցին ոռոգման սիստեմի հետագա զարգացման համար։

1927—1929 թթ. ընթացքում չորացվեցին Սև ջրի և Ջանգիբասարի ճահիճները, կառուցվեցին և շահագործման հանձնվեցին Այդր լճի ջրհան կայանն ու նրա ջրանցքը, որը ոռոգեց 3500 հեկտար անջրդի հողատարածություն։ 1930 թ. շահագործման հանձնվեց Սարդարաբատի (Հոկտեմբերյանի) ջրանցքը, որի շնորհիվ ոռոգվեց 21 հազար հեկտար հողատարածություն։ Ընդարձակվեց Վ. Ի. Լենինի անվան Շիրակի ջրանցքի ոռոգման սիստեմը։ Կառուցվեց Խոր Վիրապի ջրհան կայանն ու ջրանցքը։ Հանրապետությունում ոռոգման սիստեմի ընդարձակման շնորհիվ ոռոգվող հողատարածությունները 1928 թ. կազմեցին 110 հազար հեկտար[35]։ 1926—1928 թթ. հանրապե-

---

33 Տե՛ս նույն տեղում, ֆ. 174, ց. 1, գ. 96, թ. 72։

34 Տե՛ս «Соцстроительство Арм. ССР 1920—1940 гг.», Ереван, 1940 г., стр. 48.

35 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.)», изд. УНХУ, Ереван, 1940, стр. 62.

տության ոռոգման սիստեմի զարգացման համար պետության կողմից հատկացվել է 5 միլիոն ռուբլի[36]։

1929 թ. հանրապետությունում ծավալվում է սոցիալիստական մրցություն։ Հանրապետության բանվոր-ծառայողների օրինակով սոցիալիստական մրցության մեջ են մտնում նաև մելիորատիվ ընկերությունները։

Այսպես, օրինակ, 1930 թ. ապրիլի 15-ին Լենինականի մելիորատիվ ընկերության վարչությունը սոցմրցման մեջ է մտնում Երևանի միացյալ մելիորատիվ ընկերության հետ և կնքում պայմանագիր։ Ընկերությունները պարտավորվում են վերացնել ջրի կորուստը, պահպանել ճիշտ դասակարգային գիծ, ժամանակին զանձել ջրային հարկը, կապել անհատական սոցմրցման պայմանագիր ընկերության աշխատակիցների միջև, հրավիրել ընկերության համագումար, ընդարձակել ցանքատարածությունները։ Հանրապետության ոռոգման սիստեմի զարգացման գործում մելիորատիվ ընկերությունները պատվով են կատարում սոցիալիստական մրցությամբ ստանձնած իրենց պարտավորությունները։

Ոռոգման սիստեմի զարգացումը նպաստեց գյուղատնտեսական արտադրանքի ավելացմանը։ 1928 թ. ցանքատարածությունները արդեն անցել էին մինչպատերազմյան 1913 թ. չափերից, և հացահատիկային կուլտուրաների համախառն բերքը 53,3 հազար տոննայով գերազանցել էր այդ ժամանակաշրջանի մակարդակը։ Եթե 1913 թ. Հայաստանում արտադրվել է 177,9 հազար տոննա հացահատիկ, ապա 1928 թ.՝ 231,2 հազար տոննա[37]։

Համկ(բ)կ XV համագումարի որոշումների համաձայն, 1929 թ. Սովետական Հայաստանում սկսվում է համատարած կոլեկտիվացումը։ Դեռևս 1928 թ. հանրապետությունում կազմակերպվել էին 55 կոլտնտեսություններ։ 1929 թ. կոլտնտեսությունների թիվը կազմեց 178, իսկ 1930 թվականին՝ 380, որոնց մեջ ընդգրկվել էին արդեն 15900 տնտեսություններ։ 1930 թ. կոլտնտեսությունների ձեռքում էր գտնվում ամբողջ ցանքային տարածությունների 10,1 %, իսկ հնգամյակի վերջին տարում՝ 1932 թվականին՝ 40 %-ը[38]։

Համատարած կոլեկտիվացումն ինքնըստինքյան ստեղծեց այնպիսի նախապայման, որ մելիորատիվ ընկերությունները տեղէրում դարձան ավելորդ, որովհետև նոր ընկերություն հիմնելը կազմակերպչորեն արդեն ձևավորված կոլտնտեսություններում աննպատակ էր և անտեղի։ Սակայն ամեն դեպքում մելիորատիվ կազմակերպություն ունենալը անհրաժեշտ էր։ Այս տեսակետից մելիորատիվ ընկերությունների ֆունկցիաները վերապահվեցին կոլտնտեսություններին՝ համատարած կոլեկտիվացված շրջաններում, իսկ այն գյուղերում, որտեղ կոլեկտիվացված էր գյուղի մի մասը, մելիորատիվ ընկերությունները պահպանվեցին, որոնց մեջ իբրև անդամ կարող էին լինել նաև կոլտնտեսականները։

Նպատակահարմար գտնվեց մելիորատիվ կոոպերատիվ կազմակերպությունների ֆունկցիաները հանձնել կոլտնտեսությունների շրջանային միություններին, որոնց խորհուրդներին կից կազմակերպվեցին մելիորատիվ սեկցիաներ։ Իսկ մելիորատիվ սեկցիաների և ընկերությունների զեկավար մարմինը հանդիսացավ Հայգյուղկոոպին կից համապատասխան միությունը։

Այսպիսով, 1930 թ. համատարած կոլեկտիվացման հիման վրա մելիորատիվ ընկերությունների ֆունկցիաները տվեցին կոլտնտեսություններին և մելիորատիվ աշխատանքները հանձնարարվեցին նրանց։

Սովետական Հայաստանում կազմակերպված գյուղատնտեսական արտադրողական կոոպերատիվ կազմակերպություններն ու մելիորատիվ ընկերությունները հող նախապատրաստեցին հետագայում գյուղատնտեսությունը սոցիալիստական ձևով վերակառուցելու համար։

Մելիորատիվ ընկերությունները մելիոռատիվացիայի ենթարկեցին հանրապետության գյուղական աղքաբնակչությանը, նպաստեցին միջակ գյուղացիության շրջադարձին դեպի կոոպերատիվ կազմակերպություն և հետագայում՝ կոլեկտիվ տնտեսություն։ Մեծ է մելիորատիվ ընկերությունների դերը գյուղական աղքաբնակչության միավորման գործում։

Մելիորատիվ կոոպերացիան, ինչպես նաև գյուղատնտեսական կոոպերացիայի պարզ ձևերը կարևոր նախադրյալներ ստեղծեցին կոլտնտեսությունների կազմակերպման գործում։ Սովետական Հայաստանում գործող մելիորատիվ ընկերությունները և մյուս կոոպերատիվ կազմակերպությունները Վ. Ի. Լենինի հանձարեղ կոոպերատիվ պլանի իրականացման փայլուն արդասիքն էին։

---

36 См. там же, стр. 47.

37 Տե՛ս Հ. Թումանյան, Հայաստանի սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումը, 1962, էջ 93։

38 Տե՛ս նույն տեղում, էջ 109։